ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«04» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 183 - 25

Նախաձեռնող՝ ***«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ***
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Խորենացի փ., 1գ, բն. ե

Գործունեությունը՝ ***Վահագնաձոր բնակավայրում «Վահագնաձոր» փիէկի կառուցում***
Լոռու մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 183 - 25

«04» հոկտեմբեր **2025թ.**

Լոռու մարզի Վահագնաձոր բնակավայրում «Վահագնաձոր» փիէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Փամբակ համայնք, Վահագնաձոր բնակավայր

Ներածական մաս. «ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել «Վահագնաձոր» փիէկի կառուցման աշխատանքներ: Ընկերությունը շրջակա միջավայրի նախարարությունից 2024թ. հունիսի 20-ին ստացել է N 254-24 ջրօգտագործման թույլտվություն, 2023թ. հունիսի 30-ին՝ N 0745 էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Վահագնաձոր» փիէկը նախատեսվում է կառուցել Լոռու մարզի Վահագնաձոր բնակավայրի վարչական սահմաններում՝ Փամբակ գետի ձախ ափում:

Փամբակ գետը հանդիսանում է Դեբեդ գետի երկու խոշոր վտակներից մեկը, գետի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1374 կմ², գետի երկարությունը՝ 86 կմ: Գետի ջրային ռեժիմը բնութագրվում է երկարատև վարարումներով (ապրիլ-հուլիս), որը պայմանավորված է ձյան և սառույցի հալոցքներով:

Էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով օգտագործվելու է նախագծով նախատեսված Փամբակ գետի 1065.0-1010.0 մ նիշերի միջև 55.0 մ անկումը ունեցող հատվածը՝ 3480 մ երկարությամբ, 2200 մմ տրամագծով մետաղական ճնշումային խողովակաշարով Փամբակ գետի ելքերը կմոտեցվի փիէկի շենքին:

«ԷՎԵԼՊԻՍ» փիէկի կառուցվածքների տարածքները ծառապատ չեն, ներկայացված են տափաստանացված մարգագետիններին բնորոշ տարախոտային բուսականությամբ:

Փիէկի ենթակառուցվածքների և հարակից տարածքներում համաձայն նախնական գնահատման հայտի տեղեկատվության՝ բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակները, բնության հուշարձանները:

Նախատեսվող կառույցների տարածքներում չկան սողանքային մարմիններ և այլ վտանգավոր երևութներ:

Կառուցվող «Վահագնաձոր» փիէկի կառուցվածքների մեջ մտնում են՝

- գլխային հանգույց՝ պատվար, ճնշումային ավազան, ջրընդունիչ, լվացիչ ջրանցք,
- ճնշումային խողովակաշար՝ 3480 մ երկարությամբ,
- կայանային հանգույց՝ փիէկի շենք, տրանսֆորմատորային ենթակայան:

Գլխամասային ջրընդունիչ կառույցը նախատեսվում է կառուցել Փամբակ գետի խորը և նեղ կիրճի հատվածում՝ Վահագնաձոր բնակավայրից մոտ 3.2 կմ գետի հոսանքով դեպի վերև՝ 1065 մ բացարձակ նիշի սահմաններում: Ընկերությանը տրված ՋԹ-ով ջրառի նիշը նախատեսված է 1070 մ:

«Վահագնաձոր» փիէկի գլխային հանգույցում նախատեսվող աստիճանաձև ձկնուղու հիդրավլիկական հաշվարկի արդյունքում ձկնուղով անցնող ելքը գնահատվել է 0.77 մ^3/վ:

Ձկների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով գլխային հանգույցի պատվարին կից նախատեսվում է ձկնուղու կառուցում, որը նախատեսված է ապահովելու համար ձկների ազատ տեղաշարժը դեպի գետ՝ վերին և ստորին բիեֆներ: Բնապահպանական մնացորդային թողքը նախատեսված է բաց թողնել ՆԲ լվացիչ ջրանցքի փականով, որով կարգավորվելու է թողքի մեծությունն ըստ ամիսների: Ձկնուղին նախատեսվում է երկաթբետոնե, 15.0 մ երկարությամբ, 9 ջրավազաններով, որոնցում կապահովվի ջրի անհրաժեշտ խորությունն ու արագությունը՝ ներքին և վերին բիեֆներից ձկների, այլ ջրային մանր կենդանիների շարժման համար: Ձկնուղու ստորին նիշը՝ 1063.5 մ է: Բացի ձկնանցարանից, ձկների պահպանության համար նախատեսվում է նաև ջրառի գլխամասում, դերիվացիոն խողովակաշարի մուտքի վրա մանրաճաղավանդակի և լրացուցիչ ձկնապաշտպան մետաղական չժանգոտվող ցանցի տեղադրում, ինչը կանխում է նաև մանրաձկների մուտքը հիդրոագրեգատների թիակների վրա:

«Վահագնաձոր» փիէկի գլխային հանգույցում նախատեսվում է 9.0 մ բարձրությամբ, 11.4 մ լայնությամբ և 10.0 մ ջրթափային ճակատի երկարությամբ երկաթբետոնե ջրթափային պատվար՝ նախատեսված 3% ապահովվածության ելքերի բաց թողնման համար:

«Վահագնաձոր» փիէկի բնապահպանական թողքի քանակական հսկողության նպատակով նախատեսվում է տեղակայել UTG-21 տիպի մակարդակաչափ-հոսքաչափ՝ հագեցած տվյալների առցանց մոնիտորինգի և ավտոմատ արխիվացման հնարավորությամբ: Ջրաչափական սարքավորումը՝ «TDS-100» տիպի ուլտրաձայնային հոսքաչափը, նախատեսվում է ՋԹ-ով սահմանված ջրառի կետում (ինչպես սահմանված է նորմատիվով):

Կայանային հանգույցի տարածքը նախատեսվում է Լոռու մարզի Փամբակ գետի ձախ ափին: Կայանային հանգույցի ամբողջ մակերեսը կբարեկարգվի, տարածքը կցանկապատվի մետաղական ցանկապատով:

Փիէկի շենքը նախատեսվում է միահարկ, 281 մ^2 ընդհանուր մակերեսով, բաղկացած 2 մասնաշենքից և կից կառուցված օժանդակ շինությունից:

Փիէկի շենքում նախատեսվում են տեղադրել Բուլղարական (Vaptech) հիդրոագրեգատներ, որտեղ բացակայելու են քսայուղային նյութերի օգտագործումը, տուրբինների տեղադրումը նախատեսվում է խորքային: Մեկ տուրբինի նոմինալ հզորությունը կկազմի 1600 կՎտ, իսկ կայանի հաշվարկային հզորությունը՝ 2568 կՎտ:

«Վահագնաձոր» փիէկի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ջրի նիշը վերին բիեֆում՝ 1065.0 մ,
- ջրի նիշը ներքին բիեֆում՝ 1010.0 մ,
- ստատիկ ճնշումը՝ H= 55.0 մ,
- հաշվարկայնին ճնշում՝ Hh=51.39 մ,
- հաշվարկային ելքը՝ Q =6,00 մ³/վրկ,
- ագրեգատների թիվը՝ 2 հատ,
- կայանի դրվածքային հզորությունը՝ 2568 Կվտ,
- էլ. էներգիայի տարեկան արտադրվող քանակը ՝ 16.53 մլն.կՎտ.ժ:

Ըստ ՋԹ-ի՝ ջրառի կետի կոորդինատներն են՝

X=44⁰ 34′ 58.9″
Y=40⁰ 51′ 42.48″
H=1070.0 մ:

Ջրահեռացման կետի կոորդինատներն են՝

X=44⁰ 35′ 28.08″
Y=40⁰ 53′ 04.47″
H=1010.0 մ:

ՀՀ կառավարության առ 25.01.2018թ. N57-Ն որոշման համաձայն՝ «Վահագնաձոր» փիէկի բնապահպանական թողքի արժեքները, տարեկան կտրվածքով, ըստ ամիսների մ³/վրկ հետևյալն են՝

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2.71	2.65	3.14	5.07	4.19	3.52	2.76	2.42	2.42	2.67	2.57	2.51

«Վահագնաձոր» փիէկի շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ՝ մթնոլորտային օդի, հողի, ջրի, գետի ռեժիմների, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Փիէկի կառուցման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը շինարարության փուլում պայմանավորված կլինի հողային աշխատանքների իրականացմամբ, ծխագազերի և փոշու ժամանակավոր արտանետումներով, լանդշաֆտի ժամանակավոր խախտմամբ: Շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի կիրառման, բետոնային աշխատանքների հետ:

Փիէկի կառուցման ժամանակ հողային աշխատանքներ կիրականացվեն ջրընդունիչի, խողովակաշարի անցկացման և փիէկի շենքի կառուցման հատվածներում: Հեռոյցքի ծա-

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

վալը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում՝ հետագայում օգտագործելու նպատակով, մնացորդային հողային զանգվածի մի մասը կօգտագործվի շրջակա տարածքների և ճանապարհների բարելավման համար, իսկ գրունտի մնացած զանգվածը կտեղափոխվի համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայր:

Հողային աշխատանքների ժամանակ հանվող բերրի հողը կտեղափոխվի և կպահեստավորվի հետագայում տարածքների վերականգնման և կանաչապատման աշխատանքների համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հողային, ջրային ռեսուրսներ, կենսբազմազանություն) վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են նախնական գնահատման հայտի համապատասխան բաժիններում:

Նախատեսվում է իրականացնել մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են շինարարության և շահագործման փուլերում առաջացող թափոնատեսակների, կենցաղային աղբի կառավարմանը:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ հնարավոր արտակարգ իրավիճակների, շինարարական աշխատանքների և շահագործման փուլերում առաջացող աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու, կենսաբազմազանության պահպանության համար ևս նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հայտում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում և շահագործման փուլում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված անհրաժեշտ գումարները նշված են հայտում:

Պատճառաբանական մաս. Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում «Վահագնաձոր» փիէկի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հայտի վերաբերյալ ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Փամբակ համայնքից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Փորձաքննութան գործընթացում պարզվել է, որ.

առկա է անհամապատասխանություն՝ N254 ջրօգտագործման թույլտվությամբ 20/06/24-01/07/2026թթ. գործողության ժամկետով ամրագրված ջրառի և փիէկի կառուցման Հայտում ներկայացված ջրառի նիշի միջև, մասնավորապես՝ ջրառի նիշը ՋԹ՝ նախատեսված է 1070 մ է, իսկ ՇՄԱԳ-ում՝ 1065.0 մ, ինչի վերաբերյալ տեղեկացվել է ընկերությանը, ինչը չի շտկվել և ներկայացվել է այլ հիմնավորում:

N 254-24 ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ պայմանների 1-ին կետի զ) ենթակետում որպես պայման նշված է. «փիէկի կառուցման նախագծից շեղվելու դեպքում սույն ջրօգտագործման թույլտվությունը համարել անվավեր»:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննության փուլում լրացուցիչ աշխատանքների արդյունքում պարզվել է, որ կադաստրային քարտեզների համադրման արդյունքում ջրառի և խողովակաշարի միջև ընկած հատվածը հանդիսանում է պետական սեփականության անտառային հող, ինչի վերաբերյալ ընկերությունը չի ներկայացրել տեղեկատվություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը նշված եզրահանգումները «ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրում «Վահագնաձոր» փիէկի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան